ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<< 13 >> հուլիսի 2022թ. N ՄՈ/412 -2022

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի N 400-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2014 թվականի հուլիսի 24-ի N 1791-Ա հրամանով հաստատված հավելվածի 7-րդ կետը և «Էջմիածնի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի 2022 թվականի հուլիսի 12-ի N6/217 գրությունը.

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2018 թվականի նոյեմբերի 30-ի «Գոռ Ասատրյանին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Վաղարշապատի հիվանդանոց» պետական փակ բաժնետիրական ընկերության տնօրեն նշանակելու մասին» N 400-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝
   1) որոշմամբ հաստատված հավելվածի 4.1 կետում «460000 (չորս հարյուր վաթսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով» բառերը փոխարինել՝ <<550000 (հինգ հարյուր հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամի և յուրաքանչյուր ամիս վճարովի ծառայություններից 1 տոկոսի չափով որպես բոնուսային վճար:» բառերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ **Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

13.07.2022

X

VERIFIED OCSP 13.07.2022 15:08:50 GMT+4

Подписано: HOVHANNISYAN EDVARD 2001830505